

**ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ  
ՍԻԱՄԱՆԹՈՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ**

Սանատիւ. դիտ. դոկտոր Հ. Գ. ՌՇՏՈՒՆԻ

Սիամանթոյի ստեղծագործութեան հիմնական թեման եղել է հայրենիքը, 1890-ական թթ. արեւմտահայ արյունաներկ իրականութիւնը, ցավի, ցասման և մաքառումների ազդալին մեծ դրաման: Սիամանթոյի պոեզիայի ակունքը ներկվել է արյունով: Եվ, շնայած դրան, քերթողը հոռետես չէ:

Իրականութեան արյունոտ անցքերի կողքին Սիամանթոն դնում է ջարդերին նախորդող ժողովրդական կյանքի մանկական հուշեր, կենսախինդ տենչանքներ և իղձեր, ներհուսելով երազ և իրականութիւն: Սիամանթոյի պոեզիայի պայծառ հնչերանդը գալիս է ոչ միայն ժողովրդական կյանքի ընդերքից, այլև քերթողի հոգեկան կերտվածքից:

Ոչ միայն ստեղծագործութիւնը, այլև կենսագրական պատումները, երբեմն ստույգ մի փաստ կամ հարազատին ուղղված մի քանի տող, լույս են սփռում բանաստեղծական աշխարհի վրա, բացահայտում այնպիսի նորահայտ գծեր, որոնք կարևոր են քերթողի բնութագրման համար:

Մեր ձեռքի տակ կան նորահայտ էջեր և արխիվային նյութեր, որոնք բացահայտում են Սիամանթոյի ներքին պայծառութիւնը: Նախ տեսնենք քերթողի նամակները:

Ահա մի նամակ, որ գրված է քրոջը՝ 1910 թ. մայիսի 10-ին, Պոլսի հասցեով՝ Ամերիկայի Բոստոն քաղաքից: Նամակի տոնը, գրելաձևը, հումորի տրամադրութիւնը դրսևորում են Սիամանթոյի ներքին զվարթութիւնը, նրա գեղապաշտ ոգին, սովորական երևույթները ինքնատիպորեն ընկալող, բարձրին և վսեմին ձգտող հայացքը:

**Սիրելի Զապելս<sup>1</sup>**

Միշտ կկարծեմ որ քեզի նամակ մը պարտական եմ և ատոր համար է որ հաճախ կը գրեմ: Հիշողութիւնս չէ որ տկարացեր է, այլ նամակներու այն դեզը, որ սեղանին վրան պատասխանի կսպասեն: Քու նամակներն ալ հոն են, բայց չեմ գիտեր, թե փոխարինված են թե ոչ:

Հոս դեռ ցուրտ է և անցյալ շաբթուն ձյունին քեզի մտածեցի: Բացատրե՞մ թե ինչու:

Մեր տանը մեջ սպասուհի մը կա, առտունները երբ կոշիկներս կը մաքրե ըսելիք չունիմ, որովհետև կոշիկներս դեռ սև են... Բայց երբ կը տեսնեմ, տու-

<sup>1</sup> Այս և մյուս օրինակներում նամակները բերում ենք անփոփոխ (նամակը պահվում է մեկ մոտ):

նեն դուրս եկած պահուս, որ շուշանի պես դուռին առջև ծաղկած ձյունը կսկսի թևերը սոթթած մաքրել... հակադրությունը զարհուրելի կըլլա: Զի մոռնամ ըսելու որ սպասուհիս սեամորթ (nigroïne) մըն է... Բավական զվարթ է և հետեաբար ակռաները ցուցնելու պատենությունը շատ ունի: Հարցուց թե քույր ունի՞մ. ըսի որ այո ունիմ և երեք հատ: Քու պատկերը կուզե... կուզես հավատա կամ ոչ: Հակառակ իր անթափանցելի սևությունը, կարծեմ, կարապի հոգի մը ունի. բայց չեմ ներեր իրեն, երբ առավոտ կանուխ, իր եղերական հակադրությամբ վեր ելլե, տանը առջև և ձյունը մաքրել... կոշիկներս, այո, բայց ձյունը ոչ:

Շատ չի խնդաս այս պատմությանս վրա... և պետք է սպասես մինչև որ ես իր լուսանկարը քեզ ղրկեմ վերարկուս և զխարկս ձեռքը բռնած...: Տանտիկինս, որ ֆրանսերեն գիտե և լուսանկարիչ է, խոստացավ ճողիին լուսանկարը հանել և ինծի նվիրել:

Զուլթակդ ինչպես է, հառաջ կը տանիս թե ոչ:

Գրե երբեմն և հիշեցուր իմ պատասխանած ըլլալս, որ խղճի խայթ չունենամ:

Եղբայրդ Սիամանթո

Սիամանթոն առանձնապես մտերիմ էր կրտսեր քրոջ՝ Զապել Համբարձումյանի հետ: Նրան զրած նամակներում ավելի ցայտուն են դրսևորվում քերթողի գեղապաշտական հակումները և զգացմունքների քնքշությունը, որ ընդհանրապես զուգահեռաբան են սիրո և բնության մոտիվով զրված երգերին: Բերենք մի քանի նմուշ մամուլում տակավին չտպագրված այդ նամակներից, որոնցից պարզ երևում է, որ հեղինակը կյանքում չի եղել այնպես մոռալ, ինչպես թվում է իր ստեղծագործության դրամատիկ բնույթից: Բոլոր դեպքերում այստեղ անվիճելի են նրա էության կենսուրախ գծերը:

### Սիրելի Զապել<sup>2</sup>

Քու քաղցրությամբ լեցուն բայց բիշ մը չոր նամակդ առի: Եթե կուզես անպայման գալ, եկու—բայց Ամերիկան Սկյուտարի կապույտ և աստղազարդ երկինքները չունի ոչ ալ Պեյքերի պարտեզները, ուր ավազանին շուրջը և ծառերուն վրա թռչուններ երգեն... Հոս քու տեղդ չէ... ոչ ալ իմ տեղս, քանի որ տարիս մը դառնալու խոստումիս՝ օրը մեկ երկու անգամ շատ սիրով կմտածեմ: Ինծի ծանոթ բարեկամուհիներուդ օր. Քտիկյան, օր. Հարոնյան, օր. Փուրելյան և Գավաֆյանին բարևներ. Կարայանին ալ մասնավոր բարև ունիմ:

Քեզի փոքրիկ նվեր մը ղրկեցի...: Քեզի musik Hols մը ղրկեցի... Բայց ես չառի. գործ ունենալով, ընկերներես մեկուն հանձնարարեցի. և ամենեն զեշտ առած էր: Ես կը խոստանամ շատ ավելի գեղեցիկ մը առնելով ղրկել: Բայց ղրկեցի երգարան մը ոսկեզօծ և նորոգյալ:

<sup>2</sup> Գրականության և արվեստի թանգարան, այսուհետև՝ ԳԼԹ, Սիամանթոյի ֆոնդ. անթվակիր. տեղում ստացվել է 1909 թ. ապրիլի 29-ին:

Մայրիկին, մորաքույրին, Ազնիվին, Արմենուհիին, Սաթենիկին և Քուլուն, հորքրորջը Մաքրուհի և միշտ Ազնիվ օրիորդին բարենևրս:

Համբույրներով քեզ՝ եղբայրդ՝

Ա. Յարճանյան

Փարիզից Պոլիս՝ Զապելին գրած մի այլ նամակում գծագրվում է Սիամանթոյի ուսանողական տարիների կյանքի պատկերը, որ լեցուն է քնքշությամբ և հեռավոր կարոտներով: Դրա հետ միասին պարզորոշ երևում է «մաքրաթև երազի» պես, խաղաղասեր ու քրոջական համբույրի պես անմիջական նրա հոգին, հումորով ուղեկցվող զվարթությունը:

### Սիրելի Զապելս<sup>3</sup>

Նամակդ այս առտու ստացա: Երբեք չէի սպասեր որ այսչափ քիչ ժամանակի մեջ պիտի հաջողիս ատանկ աղվոր նամակներ գրել քու հեռավոր եղբորդ: Ժամանակ չունիմ գրելու, բայց ասով մեկտեղ սա քանի մը տողերը պիտի գրեմ որպեսզի քու աղվոր ու խոշոր աշվները չի տրտմին երբ այլևս ըսես թե սլատասխան չէ գրած նամակիդ: Իս շատ ուրախացուցիր Զապել այս առտու, որովհետև աս Բարիզ ըսած քաղաքին մեջ աշունը մինչև իրիկուն անձրև մը կուգա ու գիշերն ալ մառախուղ կընես, մարդիքը տուններին կը քաշվին անոնք որ ընտանիք ունին, իսկ ուսանողներն ալ, ինչպես ես, կամ գրադարան կերթան կամ իրենց սենյակին մեջ կը քաշվին աշխատելու: Քու նամակդ անգամ մըն ալ կը կարգամ հիմակ աս գիշեր, որովհետև հեռուներեն կուգա ու քու ձերմակ ձեռքերովդ գրված է ու հիշատակներով լեցուն է ատ անչափ սիրուն նամակդ:

Ուրիշ անգամ մըն ալ երկար պիտի գրեմ քեզի, հիմակ անձրև կուգա դուրսը, այնպես որ նույնիսկ վար չեմ կրնար ելնել քեզի նամակ գրելու համար աղվոր թուղթ գնելու: Ասով գոհացիր, ուրիշ անգամ ավելի քաղաքավար կըլլամ քեզի կապույտ թուղթի վրա գրելու:

Մայրս, քույրերս ու Վահանը իմ տեղս համբուրե:

Քու եղբայրդ համբույրներով՝

Ատոմ Յարճանյան

Այժմ վերցնենք բերթողի կյանքի վաղ շրջանի նամակներից մեկը, որ գրված է 1896-ին, հայկական ջարդերի շրջանում, Մկրտիչ հորեղբոր ուղեկցությամբ Պոլսի Պերպերյան դպրոցից Եգիպտոս փախչելու ձանապարհին՝ Հունաստանի ափերից: Ձանապարհորդական տպավորությունները Սիամանթոյի հոգուց մի պահ ցրել են արյունների մղձավանջը և վերականգնել բնական վիճակը: Քերթողը հրճվում է ծովի գեղեցկությամբ, և կապույտ հորիզոնների անդորրությունը երջանկություն է բերում նրան: Նա բարի հայաց-

<sup>3</sup> Նույն տեղում, անվակիր (գրել է Փարիզի Սորբոնի համալսարանում ուսանելու տարիներին, 1898—1901 թթ.):

քով է նայում աշխարհին, տեսնելով պայծառ գույները, փողոցների մաքրությունն ու գեղեցկությունը, մարդկային սրտերի ջերմությունը, սերը, հարազատությունն ու քնքշանքը: Հարկավ, այսպիսի հայացքը կյանքի նկատմամբ, այսպիսի շփումն ու մտերմությունը մարդկանց հետ, ոչ թե կենսամերժ, այլ կենսասեր հոգու արտահայտություն է: Բերենք նամակի ամբողջական բնագիրը:

#### Սիրելի ծնոգի իմ<sup>4</sup>

Ձորս օրվան հանդարտ ծովե մը հետո հիմա Հունաստան ելանք: Ծովը երբեք խափեց իս: Պիտի ուզեի որ այս ամբառն երկարեր, շատ երկարեր, այնչափ հանգիստ, անչափ երջանիկ սահեցավ ատ աղվոր օրերը: Դիտե՞ք որչափ բարեկամներ ունինք շոգենավին մեջ: Հիմակ սա աղվոր փողոցեն կանցնեի, պզտիկ տղա մը տեսա որ ձիշտ ու ձիշտ մեր Վահանին կը նմաներ, անոր պես խարտյաշ ու վառվռուն: Մտքես խենթ բան մը անցավ թե արդյոք փախեր հո՞ս եկեր է անպիտանը: Այս Հունաստանը ինչ գեղեցիկ քաղաք է, չեք տեսած որ գիտնաք: Փողոց մը ունի որ, լայն, ազատ, ու մաքրություն մը որ չեմ կրնար պատմել: Ամեն բան սոսկալի կերպով աժան է: Շատ հաց կա: Եթե 40 տուն ընտանիք ըլլա խոստացեր են որ եկեղեցի պիտի շինեն մեզի: Հունարեն լրագիր մը կարդացինք, տեսնեք ինչ անուշ լեզու մը ունի: Վեց ժամ պիտի պտտինք հոս՝ աղվոր տեղերը, ատոր համար պիտի ներեք որ վերջակետ դնեմ: Հա աղեկ ընտանիք մը կա. ի՞նչ բարի մարդեր, մեկեն մայրերնին մեզի համար մոր մը խնամքները ունեցավ, հայրերնին հոր, և օրիորդները քորոջ: Մեկ ընտանիքի պես միատեղ կը նստինք միատեղ կեցնենք: Ծենաչաններուն, Քոլորյաններուն ու մեր բոլոր բարեկամներուն ու մոտիկ դրացիներուն բարևներ կընենք, անշուշտ իմ կողմես: Արշալույսին ու Զապելին ալ աշվները համբուրեցեք: Վահանին ու Արմենին ալ բարև: Ներեցեք ալ վերջացնեմ: Հուսա գրատուն մը կերևա՝ երթամ տեսնեմ թե աղվոր գրքեր շատ ունի՞: Օ՜խ ձրի ընթերցումը:

Մնաք բարով, զավակնիդ՝ Ա. Յաւնանյան

Սիամանթոյի նուրբ ու զգայուն բանաստեղծական խառնվածքը սերում է ծնողներից: Քերթողի քույրերը՝ Արմենուհի Պոյաճյանը և Զապել Համբարձումյանը իրենց նամակում գրում են. «հայրս կը նմանիր Verharen-ի, մայրս՝ զգայության շաստվածուհի մըն էր»<sup>5</sup>:

Քույրը՝ Զապելը, մի այլ նամակում վերհիշում է տոնախմբության օրերի ուրախությունը, որոնց մասնակցել է Սիամանթոն: «Մայրս գեղեցիկ հագուստ հագած... ձիով, բոլոր հյուրերն ալ ձիով, և թառերու և տավուրներին զմայլելի անտունի երգերով կընկերանային հարսին և հյուրերին: Օրերով խնջույք և ուրախություն: Երջանիկ օրեր»<sup>6</sup>:

<sup>4</sup> Նույն տեղում, 1896 թ., սեպտեմբերի 20-ին Բեռլինից գրած նամակը:

<sup>5</sup> Զապել Համբարձումյանի նամակները, որոնց մի մասը գրել է մեծ քորոջ՝ Արմենուհու հետ միասին, Փարիզից Համբարձումյանը ուղարկել է մեզ (պահվում են մեզ մոտ):

<sup>6</sup> Նույն տեղում, Զապել Համբարձումյանի նամակը, 1963, մայիսի 22-ին, Փարիզ:

Նույն նամակում քույրը նկարագրում է Սիամանթոյի մանկությունը: «Ակ-  
նա մեր տան բազմաթիվ գորգերուն վրա կը խաղար և կը վազեր անընդհատ»<sup>7</sup>:  
Այս երջանիկ մանկությունը վերհիշել է նաև քերթողը հետևյալ տողերում.

Ու մոխրացա՜վ այն սենյակը կապույտ,  
Որուն ումնեուն ետև և գորգերուն վրա  
Իմ երջանիկ մանկությունս կը հրեմբե,  
Եվ կյանքս կ'աներ և հոգիս իր քները կ'առներ...

(«Այի մը մոխիր, հայրենի տուն...»)

Այսպես զուգահեռաբար են հաճախ նամակն ու բանաստեղծությունը՝ էջ  
առ էջ բացահայտելով պոեզիայի և իրականության փոխհարաբերությունը:  
Քույրը գրում է. «Նույնիսկ օր մը շինած է իր փափուկ ձեռքերով թառ մը, եր-  
գելու համար իր զմայլելի ներշնչումները»<sup>8</sup>: Ահա և նրա հանրահայտ քերթ-  
վածի տողերը:

Եվ ես լուրջսմը՝ գեղուղեշ ուտիմ ներդաշնակ հասակին.  
Երգերս ստեղծելու համար խորհրդավոր սրինգիս նյուրը  
կը կտրեի...

(«Արցունքներս»):

Ամանորի առթիվ գրած նամակում քույրը վերհիշում է մորը (իբր հիշո-  
ղությանն ավելացնելով նաև այն, ինչ լսել է հարազատներից), Ակնի  
ավանդական կենցաղը, աղբյուրից ջուր առնելու տոնական արարողու-  
թյունը, որի մասնակիցն է եղել մեծանուն եղբայրը: «... Անդրանիկ  
զավակդ՝ հոյակապ և գեղադեմ և ժպտալիք, մեր աղբյուրեն հոսած  
պայծառ ջուրեն զավաթ մը լեցուն կուտա քեզի, որպեսզի տարին նվիրի մեր  
տան առատությունը»: Սիամանթոն իր ստեղծագործության համար ոչ միայն  
օգտագործել է Ակնի բնաշխարհիկ «աղբյուրներու ոսկու» ավանդությունը, որ  
նկարագրել են Ակնեցի Հ. Ճանիկյանը<sup>9</sup> և Ազատյանը<sup>10</sup>, այլև իր իսկ ընտա-  
նիքի տոհմիկ սովորությունը:

Եվ ահա հանրահայտ «Կաղանդի իրիկուն» բանաստեղծության մեջ Սիա-  
մանթոն բերում է քրոջ նամակում հիշված ամանորի տոներից մեկը՝ ջար-  
դերից առաջ: Այստեղ ժողովրդական կյանքի իրական գույները գալիս են նաև  
Յարճանյան բազմանդամ ընտանիքի, տասներկու սենյակներից բաղկացած  
Ակնի տան հիշողությունից. «Ձմեռվա ձյունոտ օրերուն, — գրում է քույրը, —  
տունը կը տաքնար թոնիրով, որուն շուրջ կը հավաքվեին Յարճանյան ցեղին  
զավակները... վայրկյան մը կը վերհիշեմ, երբ մեր ավանդական տան մեջ  
հավաքված, նփրատի պայծառ ալիքներուն մեղեդիները կը լսեինք... սիրով,

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Հ. Ճանիկյան. Հնությունը Ակնա. Թիֆլիս, 1895. էջ 103:

<sup>10</sup> Թ. Աղատյան. Քառասնակ, Կ. Պոլիս, 1930, էջ 18—20:

երջանկությունով մեր Ակնա անսունինները և օրորները կերգելիք քու զավակ-  
ներուդ, պաշտելի մայրիկս»<sup>11</sup>։

Մարդերը զեռ երջանի՜կ են... Մարդերը դեռ լնուրյանը  
րարիֆին հետ՝  
Մեկզմեկսու նայվածի մեջ՝ յուրաքանչյուրն իր դրախտը  
կր տեսնե...  
Նոր տարիի իրիկունն է։ Ամեն երդիք իր իրախնանքի  
Ժամն ունի,  
Թոնիրին շուրջ, որուն վրա ալգիններուն մեղեդիները կր բուրեն,  
Քառասուն անձ՝ մեկ տան գավակ՝ բոլորակի նստեռ են։  
Ամեն հոգի իր առջևն ցնծությամբ մը կ'սկսի  
Իր արծաթյա աշտանակին կապույտ հրազր վառել,  
Ուրվհետև ալ զ պահուն, Երազներու ծաղկեպսակ համվաններեն,  
Հավերժահարսը կաթնամարմին, մերկ ոտներով՝  
Հայսր ձեռքն՝ կր մոտենա։  
Ու մեծ մայրը կ'սկսի տնեցիներն իրենց տնովն օրհնելու,  
— «Խաղաղություն մեր այս տարվա մեռյալին,  
Խաղաղություն ձեր բոլորին,  
Խաղաղություն աշխարհներու անգուրներուն և ձեր սիրտը  
ձեզ ապավեն»։  
Հետո ոտի՜ մատղաշ կույսերն ու հարսները համբուրելով՝  
անոնց կ'ըսեն.  
— Վաղն առավոտ՝ արևածագին՝ կուժն ուտերուդ չրի գացեք,  
Մեն մի տարի իր առաջին արևին հետ՝ իր բարիքը կրերեն,  
Ուրկեսգի ձեր օրերը չրին նման երկար ըլլան և արևին  
սլես պայծառ,  
Վաղն առավոտ՝ մընջաղին՝ ալգուն երգն երգելով՝  
Ջրի գացեք։ Նոր տարիին, աղբյուրներեն, ակնքարք մը՝  
ոսկի է որ կվազե...։

Ակնում՝ մեր երկրորդ Բողոքում, ժողովրդական հնագույն բանավեպի  
հետ պահպանվել էր նաև հայ հեթանոս կենցաղը՝ ժողովրդի կենսասեր ոգին։  
Ահա մեծ բանաստեղծի լավատեսության ակունքը։

Քույրերը շեշտում են Սիամանթոյի «կայտառ և զորավոր» կամքը։ Այդ  
են հաստատում նաև թուրքական բանտից քերթողի զրած մի շարք նամակ-  
ները։ «Մեր առողջությունը ու հանգստությունը կատարյալ է», — շարունակ  
գրում է նա տնեցիներին հույս և խրախույս տալով՝ ստույգ մահվան և եղևոնի  
միջից<sup>12</sup>։ Ռուբեն Սևակը նույնպես հաստատում է քերթողի զորավոր կամքի  
տեր լինելը, նկարագրելով թուրքախոսի դեմ՝ կյանքի համար նրա մաքառման  
արիությունը։ Ապաքինումից տարիներ հետո Շվեյցարիայում նրա հետ ունեցած  
հանդիպման առթիվ գրում է. «Ու կիսոսեր, կիսնդար, կր կատակեն...։ Ես  
զմայլված կղիտեի իր հզոր հասակն ու պայծառ դեմքը։ Ու իզուր կշանայի

<sup>11</sup> Զ. Հասարթումյանի համակր, 1973 թ., Փարիզ։

<sup>12</sup> ԿԱԹ, Սիամանթոյի ֆոնդ, տե՛ս 1915 թ. Այալից զրած նամակները։

Հիշել այն շարժարկված ու ծամածուռ դիմադծությունը, որ հոգեվարժի և հույսի ջանքերուն կողքը կը պարուրե, և որ հեղինակին նկարն էր՝ դեռ հազիվ տասար տարի առաջ...»<sup>15</sup>։

Քերթովի հոգեկան կերտվածքի մեջ ամուր կերպով նստել է այն, ինչ գրել է նրա մեջ Ակնրո Տարիներ հետո, հեռավոր Ամերիկայում նա մնացել է նույն ակնեցիին՝ «ազնիվ, հպարտ, զգայուն, նուրբ, փափկանկատ» և ծաղիկ-ների ու զեղեցիկի սիրահար՝ բնութագրել է նրան բանաստեղծի սիրո իդեալը՝ օրիորդ Սաթենիկը։ «Մարդու ամենամեծ երջանկությունն է տեսնել զեղեցիկը, վայելել զեղեցկությունը», — ասել է Սիամանթոն<sup>14</sup>։

Իվ ահա նամակները նորից գալիս են հաստատելու ժամանակակիցների կողմից նկատված հոգեկան այս դժերը: Քրեթոզը Ամերիկայից քրոջն է ուղարկում Նիագարայի ջրվեժի պատկերը՝ հետևյալ մակագրությամբ.

Սիրելի Ձայլ<sup>15</sup>

Երեկ Քանատայեն զրեցի Վահանին: Այսօր կզրեմ քեզ Ամերիկայեն: Աշխարհի մեջ այս եղական ջրվեժին տակ կեցած, անոր աղամանդյա մարդարտի փրփուրներեն միայն այս քարտը կը զրկեմ մայրիկին, քույրերուս և քեզ, Բեն շատ քիչ ռյա:

Ատոմ

Մի այլ բացիկի վրա, ուր պատկերված է ջութակահար մի ամերիկուհի, արել է այսպիսի մակագրություն.

Սիրելի Ջապէլ<sup>16</sup>

Ահա վաստիկ ջութակահար ամերիկուհի մը, որուն հասակը աչքերուդ չափ հաղանցութիւն չի թվի, իրականութիւնները ավելի քան աննման են:

## Եղբայրդ՝ Աստուհ

Այսպես կենսասեր ու զեղապաշտ է եղել Սիամանթոն իր էությամբ: Սակայն այլ է եղել ժամանակի պահանջը, այլ է եղել քերթողի զեղագիտական դավանանքը: Քանի որ հայրենիքը «իր արյունին մեջ կիսեղվեր», նա վճռել էր պոեզիան դարձնել ժողովրդի սրտի ձայնը, նրա ցավի, ցասման և պայքարի համանվագը. հրաժարվել անձնական քնարերգության մոտիվներից այնքան ժամանակ, քանի դեռ չի չորացել սերունդների թափած արյունը և չի բացվել «արդարության առավոտը»:

Ի՞նչ ահա Սիւմանթոն գալիս է հնչեցնելու վրեժի և մաքառման շփոթ-  
ները՝ պոեզիայի քաղաքական լարերը: Բնչո՞վ է բացատրվում այս: Պարզ է,  
որ սա նախասիրություն հարց չի եղել: Հրապարակված մի քանի քերթված-  
ներից արդեն հայտնի է, որ բերթոզը երազել է բնաշխարհիկ գեղեցկություն-  
ների նվազները, հողի և մարդու պոեզիան, սիրո, գինու, ուրախության մո-

13 Ռ ու Ր Լ Ն Ս Լ ա կ. «Բժշկին գրքեն իրցված էջեր և բերված ենք», Փարիզ, 1946.  
Էջ 122—123 (ընդգծումները Ռուբեն Սևակինն են),

14 Ս ա թ Ե ն ի Կ ՆՍ ա ղ Ե թ Յ ա ն, Սիւսանթոն իմ հուշերում, Գեթ, Սիւսանթոյի ֆոնդ:

15 նույն տեղում:

16 նույն տեղում:

տիվները և այլն («Արյուն է, որ կտեսնեմ», «Արցունքներս» և այլն): Սակայն այս ներքին մղումը բախվել է իրականությանը, կախման մեջ դրվել նրանից, ծնունդ տալով գեղագիտական իդեալի և արյունոտ իրականության դրամային:

Հայ գրողը մի անգամ չէ, որ կանգնել է այս դրամայի առաջ: Քննության առնելով պոեզիայի և իրականության փոխհարաբերության հարցը, Վարուժանը իր նամակներից մեկում գրում է. «Հայրենիքը զմեզ մեր անձն հեռացուցած է: Պետք է մեր սրտին նշխարները՝ որոնք երեք միլիոն ժողովրդի մեջ բաժանված են՝ հավաքել, կեդրոնացնել մեկ կուրծքի տակ, և զղալ իր սեփական Կյանքը, գոնե նվազ ժամանակվան մը համար՝ ի սեփական Արվեստին, ի սեփականքի նրդին»<sup>17</sup>:

Հայ առաջավոր գրողներին հուզել են արվեստի բազմազանության և լիարժեքության հարցերը, մինչդեռ արյունալի հայրենիքի վերքը հառնել է նրանց առաջ և գրական հրատապ արձագանք է պահանջել: Հոլովվող նույնատիպ ոճերները՝ 1894—1896-ը, և դրան հաջորդող 1909-ի Կիլիկիայի ջարդերը Սիամանթոյին կանգնեցնում են նոր խոսք ասելու դժվարին խնդրի, ինքն իրեն կրկնելու վտանգը հաղթահարելու երկունքի առաջ:

Բայց ի՞նչ արցունքով արժան էր իմ սոսկումներու նոր

սուգս արտասվել:

Ի՞նչ բառերով և ի՞նչ մուրմնեով ստեղծությանցս ու սիրույս

աշտարակները կռանել,

Ի՞նչ պատանհաններով և որպիսի՜ եղևական փոքրով այսուհետև

մեռելավորի պես գիշերվիլ,

Որ գաղափարին երգերը շփուրել, որ պատգամը սանձարձակել

կամ որ փառքը կարմիր...

Ա՛հ, տառապանքի խնկրացած ժողովուրդ,

այսօր իմ տաղանդիս աղփատությունն ինձ ներե:

(«Քննության լացը—Սիհուն»):

Հայրենիքի վիճակը ստիպել է, ինչպես բանաստեղծն է ասում, «շրթունքները դեպի Ցավը կարկառել», նախընտրել ողբը հայրենասերի: Այս պատմական բախտի դեմ կարծես մի ներքին մղումով ընդվզել է Սիամանթոն: Այդ է պատճառը, որ նրա ողբերգական հյուսվածքները հաճախ ներթափանցվում են բնության, սիրո և երջանիկ կյանքի պատկերներով: Այդպիսին են մինչև իսկ բանտի արյան տեսարանները.

Տեղ մը քոնիւր մը կա, երդիւ մը, հիշատակ մը, ծառ մը,

աղբյուր մը որ կը վազէ և առվակ մը որ կը փախչի...

Տեղ մը սիրտեր կան, գորովներ կան, զարուհներ կան,

և կյանքի կա վերջապես:

(«Բանտերուն խորերեն»):

<sup>17</sup> Դ ա ն ի ե լ Վ ա ր ո լ ժ ա ն, Նամակների, Երևան, 1965, էջ 173 (ընդգծումը Դանիել Վարուժանինն է):

Սիամանթոն վերապրում է ժողովրդական կյանքի մարտությունն ու սրբությունը: Նրա տպագրված և տակավին անտիպ բերթվածներում, ինչպես նամակներում, հաճախ հնչում են զվարթ ձայներ, մատնելով կամ ինչ-որ ձևով՝ բացահայտելով երազների, դարնան, սիրո և կարոտի աշխարհը:

Բերենք մի բանի նմուշ էլ բանաստեղծի սեպհիր, անտիպ բերթվածներին, որոնցում կենսասիրական մոտիվները շնչում են զվարթությամբ, հեթանոս ուժի և ցնորքի զեղեցկությամբ: Ահա «Հոգնություն» խորագիրը կրող բերթվածը, մի նոր գործ, որտեղ սիրո էպիկական պատումը նույնքան հարազատ է բանաստեղծի աշխարհին, որքան ժողովրդական կյանքի կոյրիտով առեցուն բնականաբար:

Խառտյաշ աղջիկներ իրենց մազերը սանրեցին  
Պայծառ աղբյուրներուն ֆով,  
Ու բոլոր կուժերը հստակ ջուրով լեցված  
Իրենց ծաղիկն ուներուն վրա  
Հոգնածուրեն  
Անտառն անցան:  
Ես աղբյուրին ֆով կհսկեմ.  
Ես ան եմ, որ վերածնունդը կերպեմ  
Աղբյուրին ֆով. երկայն ու խառտյաշ աղջկան:  
Ես ցավս աղբյուրին պատմեցի.  
Ես աղբյուրի հետ  
Առհավետ իմ ձյունի ներմակ հոգևաբա լացի  
Անտառն անցնող առուներուն մեջ:  
Ո՛վ իմ խառտյաշ ֆույրս,  
Ես հանդարտ ծաղիկներ ունիմ  
Քու աշխարհս մազերուդ համար  
Ու պայծառ ավազան մը ուր ֆու ոտքերդ պիտի լվաս:  
Եկուր աղբյուրին ֆով ֆու հոգն կուժը ջուրով պիտի լեցնեմ.  
Պայծառ ջուրովը  
Սառած ձյուններուն:  
Ես ջուրը պիտի բլլամ.  
Եվ կուժիդ մեջ պիտի հալիմ  
Ես խաղաղության ծաղիկը պիտի բլլամ ֆու մազերուդ մեջ:  
Ու պեսզի, երբ օր մը դաւն սերը հասկնաս...<sup>18</sup>:

Ահա մի բերթված, որ ամբողջովին կյանքով է տողորված, և սրա կողքին՝ բացիկներն ու նամակները: Դրանցից մեկը մի ղեռատի ղեղունու նկար է, ձեռքերում վարդերի փունջ՝ իրենից մեծ: Բացիկի վրա բանաստեղծը գրում է.

18 ԳԱԹ, Սիամանթոյի ֆոնդ (բերթվածն անավարտ է):

Սիրելի Ջապել<sup>19</sup>

Ջութակիդ դասերը այնպիսի maitrise-ով մը մշակե, որ ետեի եղող դեղեցկուհիին վարդերու փունջին արժանանաս:

Հարկավ, այս տրամադրության հայտնվելը բանաստեղծական աշխարհի արյունոտ իրականության մեջ՝ պատահական չէ: Հայրենի «ղրախտային ծմակներին», հովիտների, աղբյուրների կարոտը երբեք չի լքում բերթողին: Նրա պոեզիայում հնչում են քնքշություններ ու կսկիծներ, բացվում է պայծառերանգ պատկերների մի համակարգ:

Հծծյուն, անապակ լույս և անխառն խավար,  
 Հույսի կանաչ և խնկարույր հող,  
 Առավոտյան թռչուն, հին օրերու և անկործան  
 Հույսերու արևներուս, հոգիիս մեջ  
 Այս առավոտ, նորեն անոնց ծագ տվի՛ր դուն,  
 Ա՛հ, իմ ֆնարիս լարին վրա ֆու նվագիդ  
 Ոսկե կաթիլը որչափ կուզեմ, որչափ կուզեմ  
 Հավերժապես ես պահել...<sup>20</sup>:

(«Առավոտյան թռչուն»):

Մի այլ սեագիր կիսավարտ քերթվածում Սիամանթոն դիմում է արևին և գալիս է հաստատելու բնությանը մոտ մնալու, բնականոն կյանքով ապրելու ժողովրդական կենսափիլիսոփայությունը:

Որ կարենա՛հ, դարե ի դար հավերժապես  
 Վերեն հոսող նառագայքներս բմպելու.  
 Ի՞ր ծեռ մայրն եմ, որ բյուր անգամ ֆեզ ծնած է  
 և բյուր անգամներ պիտի ծնե...  
 Հետեցե՛ք գիս և հավատարիմ մնացե՛ք իմ անխախտելի  
 օրենքին, ա՛ր կրսե, ուր...  
 Ոչ մի ծաղիկ, որ կուզե գեղեցկուրեն և առհավետ ծաղկիլ  
 Պետք է որ նա քառամի, ուրկից իր կյանքն ստացավ...<sup>21</sup>:

Իհարկե, Սիամանթոյի ստեղծագործության համար բնորոշ է պայծառ երազանքների խզվելը իրականության բախումից: Այստեղից բխում է բնական այն հետեանքը, որ վերջ ի վերջո քերթողը ցանկանում է ազատվել իր տառապանքից ու մղձավանջից: Սակայն հակառակ այս ձգտումին, երազի և իրականության դրաման մնում է անլուծելի, շարունակում է խորանալ:

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Նույն տեղում:

Մինչև իսկ հայտնվելով Երջանկության և վայելքի տարերքի մեջ՝ արյունոտ իրականությունը սթափեցնում է դեպի սիրո լարը «շեղված» բանաստեղծին: Ահա մի նմուշ էլ, որը առաջին տարբերակում կրել է «Սեր—Կարոտին գինովություն» խորագիրը, բայց հետո դարձել է «Հրաժեշտ»: Պերմախոս այս խորագրերի գաղափարական իմաստը «տացել է գեղարվեստական ցայտուն մարմնավորում: Սիրո կարոտի գինովությամբ տարված հեղինակը հանկարծորեն սթափվելով՝ հրաժարվում է աստվածային գեղուհուց: Հրաժարվում է՝ քանի որ հայրենիքի արշալույսը ցեղի արյան նման երկրի խորերն է իջել, և քերթողի դրական դավանանքը պահանջում է ոչ թե սիրո և վայելքի թեման, այլ՝ աղետյալ հայրենիք:

Կա՛նգ առ, գեղուհի, այդ անտառին շուփին տակ,  
Ու աստվածեղեն ժպիտդ շրթունքիդ վրա թառամեցաւ...  
Աչվներե պարփակե այն շուշաններն խոռվիչ,  
Ու քու մարմար մերկությունեյ կհոսի...  
Ու կոքստաբեր շղարշով մը ագուցե...  
Մոծեակիդ վրա հալող արեգակը մագեռուդ.  
Ու ցնորհներու կապույտը արեցնող աչքերուդ  
Իմ երագիս, իմ սիրույս էջերու  
Աղամանդի կաթիլով մը թող պղտորվին:  
Հեռացի՛ր ինձմե, քու փայլերդ արշալույսի համար են,  
Ու մայրամուտե մայրամուտ՝  
Դերեզմանիս ասպնջական հողն պեղելով  
Թող անստուգին, անստուգին փայլեմ...:  
Հեռացի՛ր նակատագրի համփաներեն<sup>22</sup>:

Այսպիսով, Սիամանթուի սեպհիր քերթվածները, ինչպես և նամակները օգնում են ավելի խորը բացահայտելու նրա ներքին դրաման: «Մոխիրներու և մահերու դանթեական ճանապարհին» բանաստեղծի աշխարհը չէր կարող իրար բախվող տարերքների հակասությունը և ուժը չունենալ: Մի կողմից նա չէր կարող հնչեցնել զվարթ, երջանիկ երգեր, մյուս կողմից՝ որքան կյանքը հրեշավոր, այնքան նա համառ հավատում է գալիքին, պաշտում մարդկայնորեն վսեմն ու գեղեցիկը: Այդ պատճառով էլ երազանքի և իրականության դրաման լուծվում է ոչ միայն պայքարի և հաղթանակի երգերով, այլև թարմաբեր տարերքի երևումով: Մերթ ընդ մերթ պոռթկացող զարնան, սիրո, կարոտի և երջանկության հնչերանգները բացահայտում են ազգային մեծ ողբերգության ներքո ծնված քերթողի հոգեկան կերտվածքի կենսուրախ կողմերը, գեղեցիկը պաշտող, այդ գեղեցիկով անհունորեն հրճվող նրա լուսավոր խառնվածքը:

22 Նույն տեղում:

## ИСТОКИ ОПТИМИЗМА В ПОЭТИЧЕСКОМ МИРЕ СИАМАНТО

Доктор филол. наук Г. Г. РШТУНИ

## (Р е з ю м е)

Источники оптимизма в творчестве Сиаманто (Атом Ярджаниян, 1878--1915), одного из выдающихся армянских поэтов, восходят к народному жизнелюбию. Неопубликованные произведения и письма поэта проливают свет на те оптимистические стороны его внутреннего мира, которые, однако, были погребены под мрачными настроениями, навеянными кровавой действительностью Западной Армении конца XIX--начала XX вв. С одной стороны, он не мог создавать песни веселья и счастья, с другой — чем чудовищнее была жизнь, тем упорнее поэт верил в грядущее, в возвышенность и красоту человеческую. Мотивы весны, любви, печали и счастья характеризуют жизнерадостные стороны поэтического мира Сиаманто, подавленного трагедией армянского народа, и свидетельствуют о том, что великий поэт бесконечно верил в торжество прекрасного.